

տատուութիւն Մզգէն Տրաման և Տէրութենէն Տրովարտակ տոնելու համար” :

Վարձեալ պէտք է սպասել աւելի ման-
րաման տեղեկութեանց : Երանի՛ էր թէ
սուտ ըլլային պատմութեաները , որովհետեւ
այսպիսի ծայրագոյն յանդիմութիւն և սոս-
կալի եղեռնագործութիւն մը անտարակոյս
չարաչար դատապարտութեան արժանի է ,
և անարգանք հայ կղերութեան : Սինչեւ
ե՛րբ արդեօք պիտի տառապի Մզգէն այսպի-
սի անարժան կղերականաց երեսէն . . .”

Կիւնէնք 44-նէն նիւթիւնիւնի պահան-
ջութիւն :

“Ա՛յ երջապէս այս շաբաթ Ս՛անէն ընդու-
նեցինք հեռեկալ երկար բայց խորին ուշա-
դուութեան արժանի նամակն , որ Ֆէշ և ման-
րաման տեղեկութիւններ կարգունակէ Մզ-
գէնամարայ մէջ՝ պատահած ծանր և տխուր
անցքին վրայ :

“Ա՛յ . . . Խմբագիր :— Միշտ խեղճ Ս՛ա-
պուրականը դեռ գրեթէ նոր աղատուած
քիւրտ բարարոններէն , այսինքն՝ խան Սահ-
մուտէն և անոր նմաններէն , բարեմաղթու-
թիւններ կընէր (սմանեան բարեխնամ Տէ-
րութեան յաւիտեան հաստատութեան հա-
մար , և կը յուսար օր մը երջանկանալ իւր
նախնի աղատութիւն ձեռք բերելով՝ յան-
կարծ անձրեւէն աղատելով կարկուտի կը
բռնուի . . . այսինքն՝ ինքնակոչ հովիւներու
ձեռք կը մատնուի . . . և կըլլայ յետիւն չար քան
զառնալին : Ա՛յ արձկան հովիւներ անդժարար
կաթ կը կթեն արիւնախառն բուրդ կուզին
մախառն պատեհ անպատեհ ժամանակին
երբոր ուզին . . . կը թողուն ոչխարներ դայլոց
բերան և լիւրանց գլուխ թափառական : Հո-
վիւններ իրարու յաջորդաբար և աւելի ան-
խորճաբար այսպէս կշարունակեն . . . և ոչխա-
րը ըստ իւր հնգութեան անմեղուն , այցի-
լութիւն յԱստուծոյ կը յուսայ : Հանկարծ
լուսոյ աստղ մը կը նշմարուի օտար հորիզոնի
մը վրայ փայլած . . . և կը յուսայ անտէրունչ հօ-
տը օր մը նոյն աստղը իրեն մատանալու , ո-
րուն լուսով գուցէ մէկ մը զիրենք այնպէս
թափառական տեսնելով իւր պահպանութեան
տակն առնէ , սուտ հովիւներու ձեռքէն ա-
ղատելով : Բայց ի զուր , այս աստղը չորս
տարւոյ չափ երբեմն աղօտ , և երբեմն պայ-
ծառ կը փայլի , և իւր հորիզոնէն կէտ մը
քնհեռանար . . . վասնորոյ կը յուսահատի : Օ՛այս
կը տեսնան նաև յիշեալ վարձկան հովիւներ
աւալ աւելի կը բազմապատկեն իրենց անդը-
թութիւնները :

Այլիմ ընթերցողք կը հասկնան որ խօսքս
Ս՛ապուրականի և մասնաւորապէս Մզգէ-
նամարու միաբանութեան և իւր վիճակի
խեղճ լեզուանոց և Մզգային Ս՛արչութեան
վրայ է . . . ուստի բացատրութիւն տալն աւե-
րդ է : Մէջ , Մզգէնամարու միաբանութեան

ընթացք և ժողովրդեան յետին աստիճան
թշուառ կացութիւն . . . չեմ գիտեր ի՞նչ կեր-
պով նկարագրել , որ խթան մ’ըլլայ Մզ-
գային Ս՛արչութեան , մէկ մ’իւր աւեր յոյս
կողմը դարձնելու : Մզգէնամարու միաբանու-
թիւն ամենուն յայտնի է , որ ապստամբ և
ռեւելեղեղ է , և ոչ մէկէ մ’երկուշ կը կրէ .
կը նեղէ խեղճ ժողովուրդը Լէնկիմեմուրէն
Հաճապատէն և ի վերջին խան Սահմու-
տէն աւելի . . . Բէ՛ն , ինչպէս այն խեղճ
ազգայինք մէկ զոյգ գուրպայի համար հարիւ-
րաւոր դաւազանի հարուածներ կուտեն ան-
խիղճ միաբանութենէն . . . ոչ ինչ պատճառաւ
կը բանադրուին , և կը զոհուին սուրբ խորհուրդ-
ներէն կը զոհուին , ու շատ անգամ առանց
հաղորդութեան կամ մկրտութեան կը մեռ-
նին և օրերով անթաղ կը մնան : Ե՛ս ու-
մենուն պատճառ նոյն իսկ Խաչատուր Լեւոն-
կոյանն է , որ Կաթուղիկոսի սանձէն բռնած
կը տանի ուր և կամի . . . թէեւ նա ալ ան-
կէ վար չի մնար անդժութեան մասին :

“Բ՛ն” , Խաչատուրն է որ խեղճ ժողո-
վուրդ նշանէս կը հարստահարէ կը կեղերէ և
մորթաղերծ կընէ , նա՛ է դաւառին թան-
գիմաթ , թաշիւր և դամաւոր տոնադր , որով
հարիւրապատիկ կը նեղէ ժողովուրդը ոչ ար-
քունի արժանաւորութեան համեմատ ըստ
Լեզգի . . . ոչ միայն շէն տեղերէն այլ և ա-
ւերակներէն ալ կառնու . . . և ով կրնայ պատ-
մել վասն բաժնի , սակից մոխի , հոգեբաժ-
նից կողմերուց պսակադրամոց քահանայօրհ-
նէից և այլոց ծանրութեանց . . . բոլոր
դեռ իւր անձուկ չի լեցուիր , որուն համար
մեծամեծ հնարքներու ձեռք կը զարնէ . . .
և ասորուան օրս՝ ինչպէս կըսուի շատերէն Ծ
հաղար քսակի տէր է . . . և վաճառականու-
թիւն կընէ . . . թանգիմաթի և թիւճճար
մականունն ստացած է . . . Ե՛ս ամէն ան-
ցուկ մոռցուկ , ոճիր մը պատմեմ՝ նորեւելի
Բ՛ն , և ինչպէս պատմեմ . . . սա ինքն իսա-
չատուր Լեւոնկոյան որ հեծած էր իւր Հօր ,
այսինքն՝ զինք ձեռնադրող Ս՛աթուղիկո-
կի ուսին վրայ ու նորս ստնձը ձեռք առած
կը տանէր ուր և կամէր . . . սեպտեմբեր ամսոյն
մէջ , ինչպէս կըսուի՝ զայն փոքր ինչ իւր
կամեց դէմ գտնելով՝ իւր հարստութեանց
և աներեւոյթ ծառանց զօրութեան ապաւինե-
լով ու վտահալուելով ուղեց մերժել այն
Լեւոնէն՝ զոր Լեզգի և Տէրութեան հրամա-
նաւ ստացած էր . . . ուղեց այն իշխանութիւն
ձեռք բերել , որ իւր դերեղմանի դրան կա-
փարիչ պիտի լինի կարգեմ . . . առանց մտա-
ծելու իւր ըրածին հետեւութիւն , մեծու-
թեան սիրով կուրցած՝ ահագին գրին մէջ
ինկաւ . . . : Ս՛արագայ խաչի պահոց մէջ
կառաջարկէ միաբանութեան եպիսկոպոսաց
անոնցմէ մէկը Կաթուղիկոս ձեռնադրուե-
լու , հաստատ գիտեալով որ , անոնք յայնձն

պիտի չառնեն . . . ինչպէս օր չափին ալ . . . Եւստի,
կառաջարկէ զինք ձեռնադրել (ինչպէս կը-
սուի թէ՛ կէս մը արդէն և կէս մնալ ձեռ-
նադրուելէն զինի տնտեսութեան մասանց ձեռք
ստորագրութիւն կը ժողովէ , յոմանց սպառ-
նալեօք յոմանց սիրով յոմանց պարգևօք և
աւելի խարդախութեամբ իբրեւ վիճակին
տնտեսութեան կը ձեռնադրուի) երբ մէկ երկուք
կը հրաժարին ձեռնադրուելէ՝ գուցէ Մզ-
գէն կամ Տէրութենէն վախճալով , ինքն
կը պատասխանէ թէ՛ “ ուսկից կը վախճաք ,
Ծ՛ապարէն ազգ մեք եմք , Լեզգի Լեւոն-
ուր հոս է , Լեւոնիմաթ Տաճկաստանին ի՞նչ
կը խառնուի , Պօլիսն ալ մեր ոտք կը սե-
պուի , վասն զի անոր գլուխն է եպիսկոպոս մը
խրաւ զձեզ . իսկ աս Լեւոն գլուխ , եպիս-
կոպոսաց , ով ինչ կարող է անել մեզ ,
դեղին ոսկին անուշ կենայ , անով ամեն
բան կը լմնայ . . . այսչափ տառն աշխատեցայ
դիզել ախօրուան համար , այս տեղս ար-
դէն միշտ այսպէս ապստամբ եղած է , ու
այսպէս պիտի շարունակի մինչև աշխարհի
վերջը . . . դուք մի վախճաք , ես եմ պատասխա-
նատու ” . . . այսպէս պատասխանատուութիւն
իւր վրայ առնելով՝ և կըսուի թէ եպիսկո-
պոսաց ալ . . . (որ չորս հատ են , երկուք
աս ձեռն ձեռնադրուած , որոնք եթէ դաւ-
տիարակուին , տասն տնով գեղի մը քահանայ
կընան սեպուիլ կարծեմ , և այն ալ ժամա-
նակի կարօտ) երկու հարիւր յիսուն հա-
տով . . . իրաք տալով՝ և Հակոբ եպիսկոպոսին
ալ հարիւր հաղար դահեկան տուած է որ-
պէս զի ձեռնադրուելէն ետքը Պօլիս տանի
և անով յաջողի հրաման բերել իրեն հա-
մար . . . կը համոզէ զանոնք ոսկիով քան խօս-
քով . . . նաւը կը մտնէ ներս երթալ ու ձեռ-
նադրուի . . . և մինչդեռ Ս՛աթուղիկոս նա-
ւը կը բռնէ “ զիմաս իմ աշխուժ ոչ տամ ”
կը պոռայ և կուղէ մէջ մտնել , իբրեւ կոճի
մը ձեռքէն ու ոտքէն կը բռնուի ու աւազին
վրայ կը ձգուի արիւնաթաթաւ ու գրեթէ
կիսամեռ . . . ինքն իր յաղթանակին վրայ ու-
րախ վրաւրթ առագաստներ բացած ներս կը
մտնէ և միաբանութիւն դիմաւորելով ով-
սաննայով Լստուծոյ տաճար կը տանին , և
կոծկն նախորդին արեամբ և հարստահար-
եալ ժողովրդոց արտասուօք : Լեւոնամար հը-
քաշը չունէր որ ծովին մատներ աս ինքնա-
կու Կաթուղիկոս . . . նախորդ Կաթուղիկոսին
զօրութիւնն ալ սպառած էր չի կրցաւ դէմ
կենալ յաղթեցաւ . . . նայինք Մզգային կեդ-
րոնական Ս՛արչութիւն կրնայ ասել : չիք
մեր Կաթուղիկոս բաց ի Լեւոնիմաթ ” : Ե՛ս
լուր նոյն շաբաթու ուրբաթն օր քաղաք
հասնելով ամէն դժայուն սրտեր վերաւորե-
ցան Լեզգի աս աղէտալի վիճակին վրայ ,
փութացան Լեւոնիմաթարան սրբազան Լեւոն-
նորդին իմացնել և հարկադրեցին Կաթուղի-

կալին դիմելու, որն որ ժողովուրդեան խնդիր քաղաքականական լինելով՝ փութայ հարկերա-
դետ մը խրկելու չորս հինգ զապիւններով .
բայց անօգուտ . մինչև նոքա հոն հասան,
արդէն Սաւուղը իր հօր էջերը գտած և օ-
ճոյած էր, և նաւն ալ ներս քաշած .

« Կաթուղիկոս աւագին վրայ այնպէս ա-
րինամամախ բաւական կենալէն զկնի՝ վը-
շափանք՝ որ կէս ժամ հեռաւորութիւն ժնի
անկէ, իր եղբօր որդւոյ տուն կը տարուի
դարմանելու համար, և միւս գիշեր մինչդեռ
անկողնոյ մէջ իր թշնամեաց վրայ կալսած էր,
սարձանակի հարուածով սրտէն կը վերաու-
րուի, և փորն ալ կը ճեղքուի, և իւր կեանք
կը կնքէ այսպէս աղէտալի կերպիւ: Կայինք
միտքանութիւն և ինքնակոչ հովիւ Խաչա-
տուրն կրնան ինքզինքնին արդարացնել Ես-
տուծոյ և մարդական տալէ թէ մատ չունին
աս սպանութեան մէջ . երանի թէ չունե-
նային . . . և արդարացնէին ինքզինքնին: »

« Ինքշարթի մեծ . Կուսակալին ձեռօր
Եղծամարու միտքանութեան երկու եպիս-
կոպոս Ղազար և Յակոբ . երեք վարդապետ
Սիսիթար, Յակոբ և Յարութիւն նաև վը-
շափանից Ռէս, Կաթուղիկոսի եղբօր որդին
և Կաթուղիկոսի քիւրտ ընչիս, որ նոյն սե-
նեկին մէջ ննջած է եղբւր, քաղաքս բերուե-
ցան, և Կաթուղիկոսի ատեան քննուե-
լով և տարբեր պատասխան տալուն համար
(ոմանք ըսած կըլլան թէ՝ Կաթուղիկոս ինքն
կտակ ըրած է իր եղբօր որդւոյն որ ինքն մեռ-
նելէն ետքը տարձանակով մը իրեն զարնէ
և փորն ալ ճեղքէ . ծաղրելի՜ փաստ . բայց
Յակոբ վարդապետը ՚ի ճշմարտութենէն ըս-
տիպեալ կասէ որ, Խաչատուր եպիսկոպոս
տրովեցուցած է զարնելու . . .) Եղծար-
հականներ Կաթուղիկոսի թան ձգուե-
ցան, իսկ եպիսկոպոսը և վարդապետը Ե-
ռաջնորդարան սենեկի մը մէջ իբրև բան-
տարկեալ կեցած են, մինչև որ դատին փախ-
ձան մը տրուի: Ասեցէք շայն՝ որ տեսէք ձեր
հովիւ ու զլուս կարգուածներուն գործերը
աղբատեցէք պատմութեանց մէջ գտնուած
ներուն հետ . տեսէք նման կայ . . . բայց
չէ՛, ևս կասեմ ի զուր . մի՛ մնտո՛ւք, հապա-
լացէք ու արիւն արատաւը թափեցէք հայոց
թշուառ վիճակին, եթէ անցելոյն վրայ պէտք
է, հապա որչափ աւելի ներկային վրայ, որ մեր
աւաց առջև կը տեսնեմք այժմ . . . »

Իկելէն հիւսն իրէնէն չեմբուլան 98 չի-
երթու . Իկելէն հիւսնէն ի-
պահանքն սորէնէն:

« Եղգային և օտարազգի յազգութեանց
միջոցաւ բոլոր աշխարհ իմացաւ թէ, հայոց
ազգիս երեք բարձր դահլիճ լըմիածնիս Կի-
լիկոյ և Եղծամարայ, յանակնկալս հետեղ-
հետե կորուսին իրենց սրբազան Կաթուղի-
կոսը: Բոլոր աշխարհ միանգամայն կարգաց

ու մասամբ իւր զիտցաւ հանգուցեալ բարձ-
րաստիճան գահակալաց, մահուան պարա-
գաներն և անոնց կենաց ու գործոց վիճակը:

Հետեաբար այսօր աշխարհ հետաքրքիր
է դիտելով թէ, շայք ինչ եղանակաւ և զո-
րոնք ու ինչ կարգի և սկզբանց տէր անձինք
պիտի բարձրացնեն նոյն զլուսօր ամոռնե-
րուն վրայ: Եղգայինք ամեն տեղ կիսօսին
կաթուղիկոսութեանց ամոռնեւորուն վրայ և
կիսափաքին ժամ յառաջ տեսնել նոյն օ-
թոռներուն շինութիւնն, որ յամենայն սրտէ
կիսափաքիմք ձեք ալ:

Եղգային կրօնական ու Վաղարշական ժո-
ղովներն ալ այս օրերս իրենց ուշադրու-
թիւնը դարձուցած են Կաթուղիկոսական
ընտրութեանց այս կարեւորագոյն խնդրոյն վը-
րայ: Երեսուի է թէ շատ ժամանակ չանց-
նելով այս խնդիրը կկարգադրուի և Եղգիս
հորեւոր գլուխները կընտրուին, որով միայն
ժողովուրդեան ցաւերը բժշկուելով տրտմու-
թիւնը ուրախութեան կիսիտուի և կիսիթա-
րուի:

Երդ՝ որովհետեւ կաթուղիկոսական ընտ-
րութեանց խնդիրը տակաւին նոր կյուղուի,
որովհետեւ ամեն դր այս խնդրոյն վրայ կիս-
սի, և որովհետեւ խնդրոյն ծանրութեանց
նկատմամբ աւելորդ չէ անոր վրայ խորհրդ-
դածել և լոյս տալ, ուստի պարտ կհամա-
րուիք այս անգամ Եղծամարայ կաթուղիկո-
սութեան խնդրոյն վրայ քանի մը խօսք ը-
նել, որ իր սկզբնաւորութեան օրէն մինչև
այսօր ցաւալի կերպարանք մ' առած է և
առջի երկուքէն աւելի արժանի է ուշադրու-
թեան աղգային պաշտօնատարաց և լոգորու-
թեանց, իսկ թերեւս անգիտութեամբ քիչ
խօսուած է այս այսինքն Եղծամարայ խնդ-
րոյն վրայ:

Եյն օրը որ հեռագիրը գուժեց Եղծա-
մարայ Կաթուղիկոսին վախճանը, շատ չան-
ցաւ տաքաւայնութիւն ելաւ թէ Խաչատուր
եպիսկոպոսը սպաննելով կամ սպաննել
տալով զանի՝ ինքն յաջորդած է անոր՝ օրի-
նաւոր արարողութեամբ: Եյս պժգալի տա-
րածայնութեան վրայ, ինչպէս բնական է,
ամեն մարդ տկանջ անկեց և լրագրութիւնք
հետզհետէ սկսան իրենց հաղորդուած տե-
ղեկութիւնները հրապարակ հանել, ինչպէս
նաև մեք՝ սպասելով ճիշդ և ճանրասան վեր-
ջին տեղեկութեանց: Ոչ այսչափ միայն:
Ինչպէս պարտ էր նոյն ժամանակի Սար-
չութիւնն ալ ճշմարիտ տեղեկութիւններ առ-
նելու ձեռնարկեց, և Արօնական ժողովն նախ
քան զամենայն պատշաճ համարեցաւ Խա-
չատուր եպիսկոպոսը Կաթուղիկոսական ա-
թոռէն հեռացնել և սպասել քննութեանց
վախճանին: Վրնութիւններն սկսան. Ի.
Ղրան կողմանէ գիրեր զրկուեցան Սանայ
կուսակալին. Պատրիարքարանի կողմանէ
բարձրաստիճան եկեղեցականք քննիչ կար-

գուցան. քննութեանց մանրամասն ար-
դիւնքը տեղեկագրուած մայրաքաղաքս հա-
սաւ և տեսան անոնք որոց անկ էր: Յայտ-
նի եղաւ թէ, Կաթուղիկոսն սպաննողներն
են երկու փախտական քիւրտեր, և թէ՝
Խաչատուր Եպիսկոպոս անպարտ է սպանուե-
թեան գործին նկատմամբ:

Պատրիարքարանն ու բոլոր ազգը այս ար-
դեանց վրայ ո՛չ սակաւ ուրախացաւ, որով-
հետեւ անտարակոյս ծանր էր աղգային պատ-
մութեան մէջ աւելցած տեսնել ամենապըժ-
գալի դէպք մ' ալ, այսինքն հայ եպիսկոպո-
սի մը հայ կաթուղիկոս մը սպաննած ըլլալը:
Հետեաբար Խաչատուր եպիսկոպոսի վրայ
մնաց անմիջապէս Եղծամարայ գահը ելնե-
լուն քաղաքը, թէև կհաստատուն թէ Սիս-
թանութիւնը և բոլոր վիճակայինք ալ ձանձ-
րացած վախճանեալ կաթուղիկոսին խիստ
անվայել ընթացքէն՝ որոնք Պատրիարքարա-
նի և մեզ ալ ծանօթ են գլխովին, բռնու-
թեամբ զԽաչատուր Եպիսկոպոս Եղծամա-
րայ գահը բարձրացուցեր են:

Ճշմարտութիւնը խօսիլ մեր տէ՛հրածէշտ
պարտքն է: Խաչատուր Եպիսկոպոսը պիտի
մեղադրուիք Սիսթանութեան և վիճակայ-
նոց բռնութեանը զիջանելուն համար, եթէ
ծանօթութիւն չունենայինք վախճանելոյն
անվայել ընթացիցը, բռնասիրութեանն ու
կեղեքմանցը՝ զորս չուզելով էյիշենք հոս,
որովհետեւ մեր նպատակը չէ հոս վախճանե-
լոյն կենաց վրայ խօսել՝ որ ներկայ ժամա-
նակիս մէջ անկարելոր է և ցաւով միայն
կընու ընթերցողը:

Սիսթանային չենք կրնար մեղադրել Եղ-
ծամարայ Սիսթանութիւնը, տեսնելով որ
Խաչատուր Եպիսկոպոսի վրայ կընանայ ու
զինքը Եղծամարայ գահը կհանէ նախ քան
զվախճան նախորդին: Նիւրաւութիւն կը-
համարիմք սոգտանել Եղծամարայ աղգա-
յինք, տեսնելով որ բաղմութեամբ Պատ-
րիարքարան կիսունն ու Խաչատուր Եպիս-
կոպոսը Կաթուղիկոս կինդրեն, լսելով որ
խուռն բաղմութեամբ Եղծամարի վիճակնե-
րէն Սան կդիմեն ու Սանայ գերապատե-
լուածներէն ու վսեմաշուք Կուսակալէն թա-
խանձանք կպահանջեն որ Պատրիարքարանը
զԽաչատուր Եպիսկոպոս Եղծամարայ Կա-
թուղիկոս ճանչնայ և այնպէս հրատարակէ:
Լսելով որ հեռագիր հեռագրի վրայ Պատ-
րիարքարան կուղղեն ու Խաչատուր եպիս-
կոպոսի կաթուղիկոսութեան որոշումը կուղեն
ցաւալի սպառնալեզր:

Երդ՝ քանի որ Խաչատուր Եպիսկոպոսը
անպարտ է Եղծամարայ կաթուղիկոսին ըս-
պանման գործին նկատմամբ, քանի որ Խա-
չատուր Եպիսկոպոսը իւր կամօքը Եղծամա-
րայ գահն ելած չէ նախ քան զվախճաննա-
խորդին, այլ Սիսթանութեան ստիպմամբն
ու ժողովուրդեան բռնութեան ձանձօրն, ու-

